

սարաօցեալ, զի դիւրաւ լուծանի. զի «կրթութիւն բազմաժամանակեայ՝ մակսացական բնութիւն լինի», որպէս ասէ Արիստոսէլ ի Հակակայս յԵւթներորդ հառին, զոր փիլիսոփայն Գաւիթ սարալուծէ. «Թեպէս եւ ունակութիւն եղեալ ի նմա սարաօցի. եւ դժուարաւ եղիցի ի յոգնաժամանակն գոլոյ»:

Իմացեմ զի ոչ կարեմ յայտնի հրատարակել զանկարգութիւնս ձեր. զի ուրեմ ասէ զիրս աստուածաշունչ՝ Զառականս ազգի բնութիւն յայտնեցես. այլ վասն Աստուծոյ փութացուի հետեւել նշանաւորեան. դուք մի կարծեմք թէ նոցա սեթեւեթեալ խաբեբայութիւն զձեր սիրտն միայն է հաւանեցուցեր եւ պիտոյրեր. այլ բազում անգամ զմեզ է դիտեր եւ զայլ կատարեալս. որ Ժ. Տարով ընդուներ էմք միամտութեամբ, մինչեւ Աստուծոյ ողորմութեամբն յետոյ նշանաբանիցն բանիւն կրկին հասու եղեալք կատարելագունին՝ Աստուծով ազատեցաք ի չար կրօնից եւ աղանդոց նոցա: Ով սիրելիք, զի թեպէս ամենայն մարդ ըստ կարողութեան իւրոյ մասն ինչ ի յառաքինութեանց ըստանայ, այլ հաւատոյ դաւանութիւն եւ քննութիւն դժուարին է, որպէս ասէ սուրբն Գրիգոր Ստեփի, Ծածուկ եւ զանխուլ է աստուածաբանութիւն հասարակ մտաց, եւ հազիւ նանաչի կիրք խորհրդոց եւ սուրբ քննութեանց սրբոց, եւ